



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 48

ՏԵ Ա Ր Ա Ր

26 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 ՂՐՀ.	Տարեկան	54 ՂՐՀ.	Տարեկան	42 Ֆր.
Վեցամսեայ	25 ,	Վեցամսեայ	27 ,	Վեցամսեայ	6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

Մ Շ Ս Վ Ա Ն Ա Ռ Ս Ո Ր Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղալ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորելուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը լանձնաբարութիւն ինքզինքնուրաշխանքով հաւատարմութիւնը, ուրկէ եղած լանձնաբարութիւնը անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — Զեւհիթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստանադէսին մէջ ամենեւնի բարձր պարգէնին արժանացած են:


Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت مرتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեայի թիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՅԱՅՏՈՒՆ ԿԱՅՍ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախօին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԷԱԹԱ

1. Սինկեր խան, Թիւնէլի հոսեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան համամ.
2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԿԻՏԱՐ

Չարշը Պօյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզօղլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐ ՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԵՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագումար եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԴԵՂԻ ՃԻԻՂ

Դրամագումար եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և
կարասիք:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՅՆԷ, Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս, Ալեքանաք խան, թիւ 44 — 46:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիպգոր Անրկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 48

ՇԱԲԱԹ

26 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քիչ մըն ալ խնայեմք. — ՅՈՎՀ. Մ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ: Բերկրանք (Բանաստեղծութիւն). — ՍՈՆԵՐԱՏ ՍԱՐՐԱՅԵԱՆ: Աղջկան մը պատիւը. — ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ: Իմ օրագիրս. — ՊԵՆԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ: Մտածումներ. — ԹՐ. Մ. ՉԵՐՃԵԱՆ: Ռօֆէլլո (Բարիւղի միջնառահլը): Մէկ միջին փրակի պարզեւ մը: Քնաշրջիկը. — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ: Յայտնութիւն (Ոսանաւոր). — ՍՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ: Իմ փափաքը (Ժողովրդական բանաստեղծութիւն). — Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ: Շարքուն լուրեր:

ՔԻՉ ՄԸՆ ԱԼ ԽՆԱՅԵՆՔ

Անցեալները հանգիպեցայ բարեկամի մը որ, առեւտրական գործով մը մօտակայ գաւառ մը երթալէ ու ժամանակ մը հոն մնալէ վերջ հոս, իր ծննդավայրը դարձեր էր նորէն: Բարեկամս, զուարթ և համակրալից վերաբերումով մը ձեռքս սեղմելով՝

— Շնորհակալութեան պարտք մը ունիմ Զեղի սիրելի'ս, ըսաւ. և թէև կը փափաքէի աւելի կանուխէն յայտնել անիկա Զեղի, սակայն առիթը այսօր կը ներկայանայ:

Ու ես, որ նշանակութիւն մը չէի կրնար տալ բարեկամիս այս խօսքերուն՝ չգիտնալով շարժառիթը, անհամբերութիւնով մը ու քիչ մըն ալ զարմացած ըսի.

— Կրնամ գիտնալ պատճառը.

— Եւ ինչու չէ՞, պատճառը հարստութիւնս է:

— Հարստութիւնդ . . .

— Այո՛, հարստութիւնս որ անդգալիօրէն եկած հասած է այսօր 9000 զրդի:

— Բայց խնդրեմ պարզեցէք, չեմ հասկնար Ձեր ըսածները :

— Չհասկնալիք բան մը չկայ . այսօր խնայողութիւնով 9000 զրշ. հաւաքած եմ և ան միմիայն ձեր շնորհիւ :

— Իմ շնորհիւս, կը ծաղրէ՞ք զիս :

— Քա՛ւ լիցի, բոլոր անկեղծութիւնովս կըսեմ թէ այսօր, քիչ շատ բարեկեցիկ վիճակ մը ունենալով մէկտեղ, 9000 զրշ.ի մօտ գումար մըն ալ խնայած եմ և ասիկա կը պարտիմ ձեր մէկ գրութեան, զոր ասկէ 10-11 տարի տուալ հրատարակած էիք շաբաթերթի մը մէջ, Կծիկ մը ընենք վերնագրով :

Ու բարեկամս շարունակելով իր պատմութիւնը յայտնեց թէ ի՞նչ կերպով խնայած, մէկդի գրած էր այդ գումարը պզտիկ տուփի մը, գանձանակի մը մէջ որուն ձեռք չէր դպցուցած երկարատեւ : Կիրակիները չի սեպելով, կըսէր ան, երկուշաբթի 10 փրյ. երեքշաբթի 20 ու այսպէս իւրաքանչիւր օր նախորդին կրկինը ըլլալու պայմանով մինչեւ շաբաթ 15 զրշ. 30 փրյ. կը ձգէի գանձանակս, որով այսօր 9000 զրշ. խնայած եմ և եթէ Տէրը կամենայ, կ'աւելցնէր ան, մինչեւ 1914ին, որ ատեն 20 տարիի շրջան մը բոլորած պիտի ըլլայ խնայողութիւնս, պիտի ունենամ 16380 զրշ.ի գումար մը որ անշուշտ մեծ բան մըն է ինծի պէս պարզ մարդու մը համար :


Երբ բարեկամս աւարտեց իր այս խիստ հաճելի պատմութիւնը, ես, գաղափարին բո՛ւն հեղինակը, որ — ի՞նչ մեղքս պահեմ — բան մը չունիմ աւելցուցած՝ բաց ի պարտքերէս, հիացումէ հիացում տարուեցայ և հա՛րկ է ըսել թէ՛ որչափ ցաւ զգացի, մի և նոյն բանը ես ինքս ալ ըրած չըլլալուս համար :

Խնայողութեան գաղափարը իրաւ է թէ ունի ամէն մարդ, կամ թէ, աւելի շիտակը զուրցելով, ամէն մարդ կզգայ անոր պէտքը, և սակայն երբ կարգը կուգայ գործադրումին, մէկէ աւելի պատճառներ կը ցուցուն, անկարելիութիւններ մէջ կը բերուին, որով այդ խիստ անհրաժեշտ պէտքը, ապագայի բարեւալութեան այդ միակ միջոցը շուրջ կիյնայ ինքնին : Այսպէս օրուան գործաւորութիւնը, օրուան արհեստաւորութիւնը և օրուան երիտասարդութիւնը առհասարակ՝ չի մտաբերելով բնա՛ւ ապագան, անհաշիւ, անմրտածում կը խարճեն չահածնին, կը ծախսեն աւելին՝ շատ անգամ պարտական ալ մնալով և որ ցաւալին է կը շուարին կը մնան երբ ապրուստի անհրաժեշտ պէտքին ուրուականը ուշ կամ կանուխ կը ցցուի իրենց առջին : Քանի՞ քանի՞ շաբաթականաւոր, ամսականաւոր պաշտօնեաներ կան, որչա՛փ պզտիկ, սկսնակ խանութպաններ կան, որոնք անհրաժեշտ պէտքին առջեւ չի կրնալով կենալ՝ կ'ստիպուին 20-30 զրշ. տուրս ձգել վախառուներու՝ 100 զրշ. ձեռք ձգելու համար, և հաւատացէ՞ք որ շատեր, այս պարագաներուն մէջ անգամ, չեն վարանիր երախտագիտական զգացում յայտնել նմանօրինակ վախառուներու՝ բարիք մը, շնորհ մը (?) նկատելով անոնց չահագիտական այդ եպերելի ընթացքը : Ինչո՞ւ սակայն այս ահագին փնտր, ամենաշրջին գումարի մը փոխարէն, խնայողութեան տփիկը, այդ երանելի գան-

ձանակը իր 10-20 փարաներով ամենէն մեծ շնորհները, ամենէն մեծ բարիքները պիտի գործէր՝ կարօտութեան օրերուն մէջ: Մարդ, եթէ գիտնայ խնայել իր ճակտի քրտինքին, իր արդար վաստակին գէթ այն մասը, որ յումպէտս կը վատնուի պարզ հաճոյքի մը համար, այն մասը՝ որ, հակառակ բանի մը տեղ չի դրուելուն, ամենէն մեծ տեղը կը բռնէ գրպանի տետրակին մէջ, զոր երբեմն կը յանձնարարէր Յոռուսն մտածումներու յարգելի հեղինակը, այո՛, եթէ գիտնայ խնայել գէթ այդ մասը, իր նեղ օրերուն ալ պիտի կըրնայ գտնել, իր մօտիկը կարեւոր գումար մը, որ ամենէն մեծ բարիքը, է՛ն անկեղծ բարեկամութիւնը պիտի ցուցնէ իրեն: Անգամ մը որ այդ խնայողութեան տիփիկը իր գոյութեան ապացոյցը տայ՝ ուռճացած արդար վաստակի մը կաթիլներով, մարդ կրնայ իրեն անհրաժեշտ եղող գումարը վերցնել անկէ՝ ճիշդ այն ձեւով որով պիտի վերցնէր ծանօթ ու անծանօթ բարեկամէ, սեղանաւորէ կամ վաշխառուէ մը՝ անտոկոս կամ տոկոսաւոր, պարտամուրհակ մը ձգելով իր դանձանակին մէջ, որուն որոշեալ ժամանակի մը մէջ վճարումը մեծագոյն հաճոյքը պիտի տար իրեն: Իրաւ է թէ առջի բերան անիրականաբար կը թուի այս ձեւը, և շատեր կրնան պնդել թէ՝ անկարելի բան է որ մարդ իր դանձանակէն վերցուցածը կարենայ տեղը դնել նորէն, և սակայն երբ մարդ մտքին մէջ ունենայ միշտ սա գեղեցիկ մտածումը թէ՝ մօտաւորապէս 20000 դրոշ, պիտի ունենայ 20 տարիէն, շուտով ձեռք կը բերէ հարկ եղած հաստատակամութիւնը, և անգամ մը որ մարդ պզտիկ զոհողութիւն մը, գովելի համբերատարութիւն մը ունենայ՝ խմորը, մայան կապելու, ալ անկէ ետքը միշտ փափաք մը, սէր մը, հաճոյք մը պիտի զգայ իր խնայողութեան գեղեցիկ արդիւնքը կրկնապատկելու:

Խնայելն ուրեմն պզտիկ բան մը մեր վաստակէն, խնայելն մեր կարողութեան չափով ու խնայողութեան գործնական ապացոյցը տուող մեր բարեկամին պէս՝ վստահ ըլլալով որ ամենաշնորհ կաթիլները քիչ ժամանակի մէջ պիտի տան իրենց բարերար ազդեցութիւնը, բաւական է որ կաթիլին ու միշտ կաթիլին անոնք:

ՅՈՎՀ. Մ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ



Ք Յ Ր Կ Ր Ա Ն Բ Ս

Է՛հ... աչ կ'զգամ ուրախութիւն մ'անպատում
Ու կը շնորհիս աջքես յոյսի յոյսերով,
Յուզմունքի մը մէջ ողորդած անհոսում,
Ո՛հ, բերկրակն աչ արցունք մ'ունի հոգեքով:

Դառնը վիշտեր ա՛յ իմ հոգին չե՛ն կրծկեր,
Վայելքն ունիս ես սիրոյ մը շեհագոյն,
Ու հիմա աչ անհետացան իմ ցաւեր,
Ուրախութիւն մ'ունիս, կոյսի մը հանգոյն:

Եւ ծայրայեղ յուզմունքի մէջ բերկրութեան,
Անկերպաշնակ սոխակիս պէս սիրահաչ,
Յաւեհ կ'երգեմ սիրոյ երգեր շնորհայն,
Զգացումի մը քակ դողդոջ ու յուզեալ:

Բեզիսիրե՛լ... եւ կամ խորհիլ քե՛ ի՛մս ես...
Օր մ'աչ մնջեղ հարսանեկան խօշ երգեր...
Ու մոլեգնի՛չ հրայրներով բոցազգես,
Աղջկան կոյս ծոցիդ մէջը շնորհ, գեր:

Օր մը... մօ՛հ Կ, պիտի հիշես սուրբ երգեր

Բարձիկիդ քով, ուսիդ դրած իմ գրչուիս,

Մեղրաշունի անուն կանուիս, կիսամեռ

Զգացումի մը քակ քօշնամ, սիրաբողիս...:

Թեյա

ՍՈՎԵՏԱՆԱՐԱՏԵԱՆ

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՊԱՏԻՒԸ

Ի՛նչ զրկումներ, ի՛նչ դադարագողի ու լուեղեայն տառապանքներ պարփակուած էր իր արտաքուստ երջանիկ ապրող կնոջ երեւոյթին տակ: Նիհար, փափկակազմ աղջիկ մը, որուն տծգոյն դէմքը միայն կը մատնէր հոգեկան այն ցաւագին վիճակը որուն ենթարկուեր էր պզտիկ տարիքէն՝ առանց բերնէն տրտունջի ո եւ է բառ հանելու: Կանուխէն հօրմէ ու մօրմէ որբ, Մաքրիկ կ'ապրէր երկար տարիներէ ի վեր եղբօրը հետ որ լաւ վաստկող եւ լաւ ապրող երիտասարդ մըն էր: Իր անձէն զատ ոչ ոք սիրած էր այս տղան, ու իր ծայր աստիճան անձնասիրութիւնն ու եսասիրութիւնը արգելած էր զինք համակրութեան, բարեկամութեան կապ մ'ունենալու ո եւ է մէկուն հետ: Շահը, դրամը ամէն բանէ վեր էր իր չ'տեսի, մարդատեացի վայրագ աչքին, եւ շատեր որ իր բարեացակամութեան ու բարեկամութեան վստահած էին զանազան առիթներու մէջ, յուսախաբ եւ զզուանքով հեռացած էին այս անտանելիօրէն ծայրայեղ անձնասէրէն:

Կարպիս այս աղտոտ խմորով շաղուած, խիղճն ու ազնուութիւնը շատոնց իր սրտէն սրբուած տարուած, բնաւ հանգստութեան օր մը չ'ցուցուց իր քրոջ, երբէ՛ք. հայհուջներով, պօռալներով, կանչելներով կը մըտնէր դռնէն ներս իրիկունները եւ սպասուհիի մը չ'տրուելիք յոգնութիւններն ու տանջանքները կուտար իր քրոջ:

— Քա՛, հայվան խաֆալը, ոտքիս ջուր դիր աս գիշեր:

Աղջիկը կ'աշխատէր լռիկ, առանց բողբօքի բառ մը հանելու իր մանկական, գրեթէ անմեղ մնացած բերնէն, դողալով, դողդեղալով, յանցաւորի մը պէս գլուխը վայրահակ:

Գուրգուրանքի, աղապատանքի, սիրոյ կարօտը քաշող այս քսանամեայ դեռատի հոգին, դեռ ո՛չ մէկ բառ լսեր էր եղբօրը բերնէն, խանդաղատանքի, սիրոյ քաղցր բառեր, որոնց համար կատարեալ կարօտութիւն մը կ'զգար տարիներէ հետէ, առանց

ատոր համար պզտիկ դիտողութիւն մը կարենալ ընելու իր եղբօրը: Իր սիրոյ ծարաւի հոգին թողմեր էր այսպէսով, անձրեւ չ'տեսնող ծաղիկներու պէս, եւ անոնց նման տրխրագին, գլխահակ, նուրբ համակերպող մեղամաղձութիւն մը պարուեր էր այս կոյս ու անմեղունակ սիրտը: Մեքենական բան մը դարձեր էր իր կեանքը, աշխատութեան, բիրտ յոգնութեան երկար շղթայաւորում առանց ո եւ է զուարթ օր մ'անցուցած, տեսած ըլլալու, մինչեւ այն ատեն երբ եղբայրը ամուսնացաւ:

• • •

Հեւ ի հեւ վազելէս յոգնած կը կենամ տոմսակավաճառին խղիկին առջեւ, բազմութիւնը խռնուած է եւ հազիւ հազ կը կարողանամ ճամբայ մը բանալ ինծի՝ տոմսակս գնելու Զանադիր, իրիկուն է, ու չարթօրերու զուարթ բազմութիւնը կ'եռայ, կը զեռայ կամուրջին վրայ, փութկոտ գնացքներ, երկու բառի մէջ իրարու որպիսութիւն հարցնելներ, չոգենաւը փախցնելու երկիւղով կտրատուած խօսակցութիւններ, անհոգ դեգերումներ, բողբօք ալ չ'ո՛ս, այս կամուրջին վրայ, որ ուշադրութիւնս կը գրաւեն, կղզիին չոգենաւը ետեւէ կը լենայ եւ իր խոշոր զանգուածը կը սկսի մեծադղորդ շարժիլ: Իրարանցում մը ուշադրութիւնս դէպ ի այն կողմ կը դարձնէ, ես ալ բազմութեան հետ դէպ ի չոգենաւ կ'երկնամ. կին մըն է, աւելի աղջիկ մը, որ լալով չոգենաւէն դուրս կը խոյանայ, առանց ատեն ձգելու որ զինքը տեսնեմ, եւ քիչ մը անդին, կ'իյնայ նուաղած, կամուրջին բիրտ տախտակներուն վրայ մարմինը տարածուած:

Բազմութիւնը աղջկան շուրջ կը խռնուի, ես ալ անոնց հետ կը մօտենամ եւ չըջանալ կը կը լայնայ տակաւ կնոջ շուրջ: Ու յանկարծ աչերս զարմացած, կը յարին մարդիկ վրայ, ի՛նքն է արդեօք, այո՛, խաբկանք բնաւ չ'կայ, նոյն ինքն, Մաքրիկը: Գլուխը գլխարկ չ'կայ, պարզ ձերմակ գոգնոց մը միայն կապած որ սպասուհիի մը երեւոյթը կուտայ իրեն, մազերը ցիր ու ցան, գլուխը լքուած դիրքով մը դէպ ի մէկ կողմը ծռած, որ կարծես դիմացինին կ'աղերսէ:

Դեղարան կը փոխադրեն զինք, ես, իբր իր մօտիկ բարեկամը գլխաւոր խնամքը վերաս կ'առնեմ, վերջապէս կ'սթափի: Շուրջինները իր ընթացքին, վազելով շոգենաւէն դուրս ելնելուն պատճառը կը հարցնեն:

— Սիրտս գէշ եղաւ, շոգենաւէն դուրս ելայ, դուրսը մարելու համար կը պատասխանէ հարցափորձող մէկ քանի բարեացակամ ու ազնիւ անձերու, որոնք մինչեւ հոն ընկերացած են իրեն:

Եւ կը դիտեմ որ տօգոյն դէմքին վրայ փոսորագեղ վարդեր կը փրթին, գիտեմ որ կը ստէ. բայց ես ալ միւսներուն պէս կը լռեմ, գիտնալով իր ամօթխած եւ հմուկ աղջկան ընտիր բնաւորութիւնը:

Իր խնդրանքին վրայ կ'ընկերանամ իրեն. ամուսնացած քրոջը տունը երթալ կը փափաքի որ Բանկալթի է, բայց Ղալաթիայէն մինչեւ Բանկալթի քալելու կարողութիւն չ'կայ վրան, ծունկերը կը դողան, նիհարցեր, նիհարցեր, աչքերը փոսը ինկեր են ու կարծես պզտիկ հովէ մը խնալու մշտապատրաստ երեւոյթն ունի իր ազազուն եւ տկար մարմինը: Կառք նստիլ կ'ուզէ, փափաքին դէմ չ'եմ դնել: Զգուշութեամբ իր դիմաց կը նստիմ, յարգալից ու տխուր երեւոյթով մը, եւ դեռ կառքը հինգ վայրկեան չ'յառաջացած հեկեկալով կ'սկսի աղջիկը լալ:

— Լալու ի՞նչ կայ, խենդ ե՞ս Մաքրիկ, տղայ՝ ես:

Ու իր արցունքներուն մէջէն, այլ եւս չ'կարողանալով իր գաղտնիքն ու տառապանքը ներսը պահել, չ'կարողանալով այլ եւս լռիկ վշտակրելու իր տարիներու դիւցազնութիւնն ի գործ դնել, իբր հղբայր կ'սկսի ընդհանուր գծերուն մէջ իր վշտին մեծութիւնը ինծի պատմել:

« Եղբայրը ամուսնացեր էր դերձակուհի աղջկեան մը հետ, չլանալով բնականաբար անոր ունեցած տունէն, առած կ'ընէր, կատարեալ եսասէրի տիպար մըն ալ, ձեռք ձեռքի տուած իր ամուսնին, սկսեր էին Մաքրիկը սպասուհի մը պէս տան մէջ գործածել: Ամէն անհատականութիւն, մարդկային ամէն զգացում կորսնցուցած այս եղբայրը, թոյլատրած իսկ չ'էր որ քոյրը իրեն եւ իր կնոջ հետ ճաշէ, եւ իրենց կերակու-

րին մնացորդներովն էր որ սներ էր ամիսներով խեղճ աղջիկը, խոհանոցին մէկ անկիւնը, անարժան սեպելով ինքզինքը անոնց սեղանակից ըլլալու: Բայց նորէն դժգոհութեան ո եւ է բառ. չ'էր արտասանած, երբ որ մը Կարպիս ու իր կ'ընէր սկսեր էին տըրտընջալ իր երեսին թէ՛ աւելորդ բեռ մը կ'ըլլար իրենց վրայ, եւ թէ իր գլխուն ճարը նայելու էր:

Մաքրիկ ըմբոստացում մ'ունեցեր էր այս խօսքին առջեւ, ի՞նչ, ինք որ այնքան տարիներ եղբորը համար աշխատեր, զանկաւ մեծցուցեր, անոր աղտոտութիւնը մաքրեր, աւելորդ բեռ մը կուգա՞ր հիմա. լա՛ւ, առանց ո եւ է բառի, առանց պատասխանի, սպասուհիութեան գործ մը գտեր էր, եւ այս չարաթ գիշեր եկեր գտեր էր կամուրջին գլուխը այն մարդը որուն տունը, Մեծ կղզի պիտի երթար: Ինք որ կեանքին մէջ անգամ մ'իսկ միտակ դուրս ելած չ'էր, ահա շոգենաւին մէջ մարդու մը հետ որու երեսը առաջին անգամ տեսած էր: Բայց մարդը սկսած էր լեզուն դարձնել եւ ըսած էր թէ՛ այն գիշեր Կղզի պիտի կենային եւ հետեւեալ օրը Եագաճըզ պիտի անցնէին հոն տան մը մէջ տեղաւորցնելու համար զինք: Մաքրիկ կեղծիք մը նշմարած էր խօսքի այս փոփոխութեան մէջ, նշմարած էր վայրկենաբար իր առած անխոհեմ քայլին ծուռ ընթացքը, եւ շոգենաւէն դուրս նետած էր ինքզինք, ու յուզումէն նուաղած՝ երբ ես զինքը տեսեր էի:

— Ալ եղբորդ չ'պիտի՞ երթաս Մաքրիկ, կը հարցնեմ իրեն:

— Աստուած չ'ընէ, կը պատասխանէ, մուրացկանութիւն պիտի ընեմ՝ ալ անոր դուռը ափ չ'պիտի առնեմ, սարիներով աշխատանքիս, տատանքիս փոխարէն՝ պատառ մը հաց չատ գտաւ ինծի անիկա, ինծի որ անոր աղտոտ լաթերը լուացեր եմ, որուն հիւանդութիւնները խնամեր եմ ամիսներով:

Ու իր լացին ձայնը, տխրագին երգի մը պէս կը հնչէ ականջիս, մեռնելով տակաւ կառքին անիւներուն հանած ժխորին մէջ:

ԼԵԻՈՆ ՇԱԹԲԵԱՆ

ԻՄ ՕՐԱԳԻՐՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Սրբանտիտ կամ Սրբնտիտ, ո՛րը որ կու-
գէք:

Բերացիներէն անմահացող այդ զբօսա-
վայրը, թէեւ չեմ կարծեր թէ այս տողերը
կարդացողներու մէջ չգիտցող մը գտնուի,
սակայն եւ այնպէս կ'ուզեմ անոր վրայօք
երկու տող միտտել Օրագիրիս մէջ:

Անցեալ կիրակի իրիկուն, չեմ գիտեր
ինչպէս եղաւ՝ հոտ մտնալու գաղափարը ու-
նեցանք ես եւ քուզինս: Սկիւտարի, Գում
գարուի եւ Սամաթիոյ մէջ երբ երկու ման-
կամարդ կին կամ օրիորդ, առանց քաղալի-
էի հանրային վայր մը գտնուին՝ աչք, լեզու,
բերան, միահամուռ վրանին կը թափին քաշ-
քըշելու, բզբտելու համար զանոնք, իբր թէ
Սուրբ Գիրքէն թուղթ պատռած ըլլան, եւ
անաթեմաները անձրեւի պէս կը տեղան վը-
րանին, մինչդեռ հոս՝ Բերայի մէջ կարե-
ւորութիւն անգամ չունի, ոչ ոք ուշադրու-
թիւն կ'ընէ այս մասին:

Սրբանտիտ ...: Անունին պէս չքեղ ...
գիշերը թերեւս, շնորհիւ կազի կտուցնե-
րուն որոնք, մաշած աթոռները, փոշապատ
հայելիները, ծռմուկած սպասները եւ կառ-
սօնները փայլուն կը ցուցնեն:

Սրբանտիտ ... չքեղ սալօն:

ԵՐԵՔՇԱԲԹԻ

Շատ անգամ խորհրդածութեան նիւթ
ըրած եմ եկեղեցւոյ մէջ կարգ մը տիկին-
ներուն եւ օրիորդներուն անուշահոտութիւն-
ներ քսուքտիլը: Արդէն դիտուած է որ
կանայք երբ Աստուծոյ տաճարը կը դիմեն,
իրենց զարդեղեններէն բան մը չեն ձգեր
տունը, բոլորն ալ վրանին կը զետեղեն, կը
հագուին իրենց էն ծանր հագուստը, եւ
ի վերայ այսր ամենայնի՝ անուշահոտութիւն-
ներ ալ կը գործածեն... չեմ գիտեր ինչու:

Թուալէթը, որ կնոջ էն սիրած եւ գոր-
ծադրած բանն է, կը հասկնամ, եւ կ'ըն-

դունիմ, բայց եկեղեցւոյ մէջ, Աստուծոյ
տան մէջ, Անո՛ր դէմ ... ասիկայ քրիստո-
նէութենէ դուրս է կը համարձակիմ ըսել:
Մաքրութիւնը, կոկիկութիւնը պարտք մըն
է, իսկ աւելորդադրութիւնը, շիւսը, օթ-
թօնախ եւ իշանի կշանկ ... ծուրկութիւն
պարզապէս:

Չեմ գիտեր թէ որո՞ւ համար կը պնու-
ին, որո՞ւ համար կը քսուքտիլն, եւ որո՞ւ
համար կուգան այդ աղօթատեղին: Սեւ
քօսթիւմ մը, պարզ անզարդ գլխարկով,
ահա եկեղեցւոյ պատշաճ հագուստը, զոր
պէտք է կրեն մեր քոյրերը, իսկ ելլալ հար-
սանեկան տարազներով դիմել Աստուծոյ
տունը, ասիկայ չեմ կրնար մարտել:

Հապա ի՞նչ կըսէք այն սեսակ չափա-
զանցութեանց, որոնց մէջ է նաեւ, զրպա-
նէն պզտիկ շիշ մը հանելով նորոգել էքրօթ-
ռէն ճիշգ ժամերգութեանց պահուն ...:

Ի՞նչ արտառոցութիւններ կան, որոնց
վրայ շատ չենք խորհիր, սակայն անոնք՝
կըլլան կը կատարին ամէն օր մեր աչքին
դէմ, նոյն իսկ աղօթատեղիներու մէջ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Այսօր երեկոյեան դէմ երբ պատուհա-
նիս առջեւ նստած լալկան բնութիւնը կը
դիտէի, զոյգ մը նորապսակ ամուսնի անցան
մեր տան առջեւէն: Մանկամարդ կինը, ո-
րուն մազերուն մէջ թերեւս գտնուէին լէ-
մոնի ճերմակ ծաղիկներու բլթակներ, հովա-
նոցին տակ պատսպար, ապրիլ շիւս սեւ
բէշերը, կոխ բեռն կանթէ մատներով վեր
ժողուած, կապաւի մը պէս քարէ քար կ'ոս-
տոստեր, անձրեւէն եւ ցեխերէն չ'աղտո-
տելու համար արդուզարդը: Տասը քայլ
հեռուէն իրեն կը հետեւեր, հաստաբազուկ
մէկը, մաքուր ու կոկիկ հագուած, բայց ոչ
endimanché, սիկառ մը բերնին, եւ բոլորովին
անտարբեր, առաջքէն գացող կնոջ վիճակին:

Այսպէս կ'ըլլայ ըսի մտովի: Սա զոյգը,
անցեալ տարի միշտ թեւ թեւի կը տեսնայի
հոս հոն, երբ դեռ Աստուծոյ մարդը զի-
րենք չեր պսակեր: Այն ատեն, սէր մը,
գուրգուրանք մը, միութիւն մը կար իրենց
մէջ, նշանածի սիրտմաշուկ մը ունէին եր-

կուքն ալ, միշտ քով քովի կ'ընթանային, եւ տեսնողը կը քովեր, կ'աղօթեր ըսելով՝ «ինչ սիրով են իրարու հետ, Աստուած քաւմարին հասցունէ...», բայց, հիմա որ ամէն բան անցած է, եւ էրիկ կնկան թեխիք-սիզուկուն մը մինչեւ ծովերնին արմատացած է ալ, ցուրտ անտարբերութիւն մը տիրող բնոյթը եղած է երկուքին մէջ ալ, եւ ահա, այսօր փոխանակ նշանած օրերու պէս թեւ թեւի գտնուելու, իրարու հետ սրդողածի պէս մէկզմէկէ հեռու կ'ընթանան...:

Շատ անգամ մտածելով այս ցուրտ ճըմարտութեան վրայօք, կը կարեկցիմ այն կարգ մը օրիորդներու տածած գաղափարին վրայ:

Օրուան օրիորդները՝ ա'խ ամուսնանալինք կը գոչեն:

Օրուան տիկիները՝ ա'խ սեւ սլսակ կը բացագանչեն:

Ես այս երկուքէն ոչ մէկը կ'ընդունիմ, բացի ամուրի ազատ դեղձանիկի կեանքէն, որուն մէջ կը գտնեմ հունաւոր կեանքին բոլոր երջանկութիւնները:

ՀԻՆԳԵԱԲԹԻ

Կը ճանչնա՞ք զինքը, տեսա՞՞ք էք, խօսա՞՞ք էք հետը: Փռնջի արտօնատէր մեծայարգ Համարձու՞մ է՞ք. Ալաճաճեան, ահա տիպար խմբագիրը, օրուան լրագրութեան պատիւ բերող անձնաւորութիւն մը, որուն մէկ ակնարկը, իմաստալից մէկ նայուածքը սիւնակներ կարծեն:

Համարձու՞մ է՞ք. Ալաճաճեան, մին է այն զէմքերէն, որոյ նմանը չատ քիչ անգամ կը հասցնեն օրուան մեր դպրոցները: Քաջ հայագետ, եւ կարող խմբագիր, ահա իր յատկութիւնները, որոնցմով կարողացած է քառասուն տարիներէ աւելի երկար ժամանակ պահել իր թերթը, անարատ եւ մաքուր:

Անգամ մը շոգենաւին մէջ հեռուէն հեռու ցուցուցին ինծի այդ պատկառելի ծերուկը: Զմայրումս, եւ համակրանքս մղեց զիս որպէս զի երթամ իր ձեռքը համբուրեմ, ի նշան խորին երախտիքի:

— Շնորհակալ եմ, աղջիկս, բայց չեմ

ճանչնար կոր ըսաւ, ակնոցին տակեն վրաս ձգելով իր փորձ աչքերը, որոնց մէջէն, տարիներու փորձառութիւնը դուրս կ'ուզար:

— Վարժուհի եմ ըսի, եւ երբեմն ալ յօդուածագիր...:

— Յօդուածագիր՝... կրկնեց Ալաճաճեան աչքերը բանալով եւ ետ ետ քաշուելով... ինչո՞ւ...:

Այս ինչո՞ւն չի հասկցայ, որովհետեւ տեղը չէր այդ հարցման, թէ ինչու յօդուածագիր եղած էի, ի՞նչ կը նշանակեր այս հարցումը:

— Խնդրեմ Ալաճաճեան էֆէնտի, կը ներէ՞ք որ համարձակիմ հարցնել թէ՛ ի՞նչ նշանակութիւն ունէր այդ շեշտեալ ինչուն, իմ յօդուածագրութեանս համար...:

— Նայէ աղջիկս ըսեմ, աւելցուց զուլը մէկ կողմ ծռելով, մայրիկ ունի՞ս...:

— Այո՞...:

— Ամուսնացած ես...:

— Ո՛չ...:

— Ուրեմն քաշուէ աղջիկս, քաշուէ այդ ասպարէզէն, տե՛ս ես, քառասուն տարիէ ի վեր կը գրեմ, եւ գիտե՛ս ինչպէս կը վարձատրուին գրչի աշխատաւորները... կարդայ Ա. Մամուլի նախորդ թիւերուն մէջ Յ. Արփիարի յօդուածը, ատիկայ գրական պսակն է, քառասուն տարուան յոգնութեանս ովասիւր...:

Ծերունի խմբագիրը մեկնեցաւ մօտէս, զիս ձգելով ապերախտ ասպարէզ մը ընդգրկած ըլլալու տխուր պատրանքին մէջ:

Օր մ'ալ զիս չպիտի՞ քաջընէ հրապարակագիր ըսուած գրչակները...:

ՈՒՐԲԱԹ

Ամենքդ ալ կ'ընդունիք կարծեմ, երբ ըսեմ թէ՛ մայրեր, միշտ հակամետ են իրենց աղջկան տարիքը պահելու, կամ լաւ է ըսել պզտիկցնելու:

Այս արեւու պէս պայծառ ճմարտութիւնը ամէն օր կը լսենք ընտանեկան շրջանակներու մէջ, եւ բնաւ չենք հետաքրքրուիլ անոր զուարճալի կողմերովը:

Այսօր մայր մը կը ծածկէ, կը պահէ իր աղջկան տարիքը — անշուշտ ամուսնացու աղջկանը — եւ անոր չի խնայէր այն բոլոր

Փանթէզի արդուգարդերը, թուալէթները, որոնք կանանց յատուկ են:

Օրիորդին տարիքը տասն եւ չորսէն տասըն եւ հինգ հազիւ կայ կ'ըսեն, եւ անոր մազերուն կուտան այն ձեւը՝ որ զաւակներու տէր մանկամարդ կիներուն յատուկ է:

Օրիորդը դեռ տասն եւ վեցը մտած չէ կ'ըսեն, եւ մետաքսներու մէջ կը ծրարեն:

Օրիորդը դեռ կաթ կը հոտի կըսեն ու աղամանդներով կը զարդարեն անոր երեւելիք բոլոր անդամները, բան մը՝ որ ամուսնացեալ տիկնոջ վայլում է:

Եւ ասով բոլորովին ծաղրելի կը դառնան անգիտակցարար:

Օրիորդ մը պէտք է միշտ պարզ ներկայանայ, պարզասիրութիւնը սիրէ եւ եթէ կարելի է նոյն իսկ մերժէ, մայրական չափազանց պահանջկոտութիւնը, որուն գաղիտցիք trop de zèle անունը կուտան:

ՇԱՅԱԾ

Հարցում մը ունիմ, իմ յարգելի ընթերցողուհիներուս, որուն պատասխանելու ձանձրոյթը կը տան անշուշտ: Մի եւ նոյն ատեն կը խնդրեմ «Հանրագիտակի Պատ. Խմբագրապետէն, որպէս զի տեղ տայ այդ պատասխաններուն:

Թէ՛

«Օրիորդ մը ո'ր աստիքին մէջ պէտք է ամուսնանայ եւ ինչո՞ւ»:

Այս կարեւոր հարցումը կ'ուզղեմ ամէն անոնց՝ որոնք քիչ շատ կրնան իրենց գաղափարները գրի առնել անսխալ:

Ղրկուած պատասխաններու մէջէ, որոնք յաջորդաբար պիտի հրատարակուին, է'ն բանաւոր գրուածքին պիտի նուիրեմ մետաքս դաշկինակ մը ձեռագործ մառխայով, իբր յիշատակ կին գրողէ մը առ կին պատասխանողն:

ԿԻՐԱԿԻ

— Ամէն բան գիտցիր՝ բայց համայնագետի հովեր մի փչեր:

— Մաքրութիւնը եւ պարզութիւնը կնոջ վրայ, անոր բնոյթը եւ խմորը կը յայտնեն:

— Աւելի լաւ է կարդալ քան գրել:

ՊԷՍԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

— Ինքնանուէր բարեկամի մը սիրտը ճշմարիտ խորան մ'է:

— Առաքինութեան փայտնութիւնները ընթողիւնելը՝ գեղեցիկն ճանաչողութիւնը ունենայ ըսելի է:

— Մտաւոր աշխատութիւնը աւելի սպառող յատկութիւն մը ունի՝ քան ուրիշ ո եւ է մարմնական աշխատութիւն:

— Տգիտութեան յատկանշանքներէն մեկը՝ ամէն բան գիտնալ ձեռացնելն է:

— Այրիկն մեծագոյն բարեկամն է կիկը, իսկ կնոջ մեծագոյն բարեկամն է դրամը:

— Կիրքերն ու անբարոյականութիւնը մարդու մեջէն կը ջնջեն ամէն ազնիւ զգացում ու նոյն իսկ ընտանեկան սէր:

— Մարդու միտքը՝ ամէն պարագաներու մէջ գեղեցիկին ենթակայ է:

— Գրականութիւնը մարդկութեան կենդանի՝ ու ամենեւնի շողշողուն պատկերն է:

— Մարդ մը որչափ ալ արժանիք ունենայ, անոր կես պատիւը չի կրնար վայելել:

— Դաստիարակութիւնը՝ ամենեւնի փութն ու ամենեւնի նուիրական պաշտօնն է:

— Գիրք՝ մտքին կենդանագիրն է:

— Յաջողելու միակ աղբիւրը՝ անուն մը շինելն է:

— Աշխատութիւնը՝ այն ոսկեղէն բանալին է որ մարդկութեան առջեւ կը բանայ բոլոր զանաւարանները:

— Մուշտիւնը թշնամի է ընկերական կենաց, ժանգ է իմացականութեան եւ աղբիւր է ամենայն չարեաց:

— Գործի մը յաջողութիւնը՝ գործաւորին կարողութեան կախում ունի:

Պանտմա

ԹԲ. Մ. ՉԵՐՉԵԱՆ

Տես կողքիս Բ. էջին վրայ՝ դեղագործ Կիւմիւշեան Լեւոն էֆէնտիի ոտանաւոր ծանուցումը:

ԱՇԽԱՏԱԿԱՆ ՄԵԶ

ՌՕՔՖԵԼԼԸՌ ՔԱՐԻԻՂԻ ՄԻԼԵԱՌԱՏԵՐԸ

.....

Ռօֆֆելլըն այն Ամերիկացի միլեառատներն է, որ իր ահագին հարստութիւնը կը պարտի ՄԻՄԻԱՅՆ քարիւղին:

Մինչեւ այսօր իր բուն հարստութեան որոշ գումարը ոչ ոք կրցած է, ոչ ալ պիտի ըլլայ մէկը որ կարենայ ճշդել, նոյն իսկ Միացեալ Նահանգաց քարիւղի թրքաքը իր սթաթիսթիքին մէջ չէ կրցած որոշապէս ի վեր հանել այս հսկայ միլեառատիրոջ քարիւղէն քաջած տարեկան հասոյթը:

Ահաւասիկ 1898էն մինչեւ 1905 Պր. Ռօքֆելլընի բաժին ինկած գումարին մէկ ցուցակը, զոր պատրաստած է Սթանսարս:

Տարի	Բաժանելի գումար	Ռօքֆելլընի բաժինը
1898	տօլար 29,955,000	տօլար 9,980,000
1899	» 32,940,000	» 10,980,000
1900	» 46,600,000	» 13,600,000
1901	» 46,800,000	» 13,600,000
1902	» 43,875,000	» 14,620,000
1903	» 42,300,000	» 14,300,000
1904	» 35,100,000	» 11,700,000
1905	» 39,000,000	» 13,000,000
	316,570,000	101,780,000

Ինչպէս վերը կերեւի, քարիւղի այս առասպելային շահատէրը Ռօքֆելլընի համար կրնայ ըսուիլ թէ տարին 12 միլիօն տօլարի հասոյթ մը կը քաշէ, ինչ որ ըսել է 60 միլեօն ֆրանք, գրեթէ շաբաթական Մէկ Միլիօն:


Երբ ուզենք հաշուել այս դրամագլուխին տոկոսը 4 1/2 էն, պիտի տեսնենք թէ՝ քարիւղի թրքաքին մէջ միմիայն միւսիւ Ռօքֆելլընի բաժինը կը հասնի Մէկ Ուիկի Միլիօնի անհաւատալի գումարին:

Բայց, պէտք է աւելցնել թէ՝ այս միլեառատներն ալ իր մտածելու կամ լաւ է ըսել իր տեսքերը ունի, (քահանան չի հասկըցուի): Պր. Ռօքֆելլըն սաստիկ կը տառապի անմարսողութենէ, եւ ստամոքսի շարունակական խիթերէ, այնպէս որ օրուան մէջ հազիւ կրնայ ... 1/2 քաշ կաթ մարսել,

հակառակ շարժուման մէջ մէկ միլեօն տօլարը մարսելուն (°):

Հիմա ընթերցողաց խորհրդածութեան կը յանձնեմ սա կէտը թէ, երբ ձմրան այս երկար գիշերներուն կանաչ սեղանին շուրջը բոլորած ընտանիքներ, սկսանայիլ կը խաղան եւ կամ քօնջինայ, եւ որ իրենց գլխուն վերեւ բէթօսը լուիկ մնջիկ կը վառի պայծառ լոյսի մը պատրանքը տալով մթնոլորտին մէջ, հեռուն դա Ամերիկայի անկիւնը մէկը կայ, որ կ'օգտուի ատկէ, կը հրճուի կը խայտայ... եթէ երբէք քիմիկտին քիչ մը ուշանայ:

Պր. Ռօքֆելլըն արդեօք իր սոսկավիթ խար հարստութենէն ո՞րչափը կը թողուր անոր՝ որ կարենար երկու պնակ փառուշեայ փիյազին մարսեցնել տալ իրեն (° ° °):



ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՅՐԱՆՔԻ ՊԱՐԳԵԻ ՄԸ

Բարիզի Մամուլ վերջին վիճակահանութեան առաջին պարգեւը շահեցան երկու ազգականներ, Ժէլբէր եւ Մէսէն, որք ինչ կը բնակին, ընկերակցաբար 10ական ֆրանք տալով գնեցին վիճակահանութեան թուղթը: Առաջինը, 48 տարեկան արհեստով նկարիչ մ'է, կին մը եւ հինգ զաւակ ունի, եւ դեռ շաբաթ մ'առաջ գործէ հանուած էր: Երբ իր բախտաւորութիւնն իմացաւ, յայտարարեց թէ 10,000ական ֆրանք պիտի նուիրէ իր ընտանեաց իւրաքանչիւր անդամին, եւ հասութարեր կալուած մը պիտի գնէ հօրը համար: Ժէլբէր կը պատմէ թէ ասկէ առաջ կնոջն հետ կուի մ'ունենցած էր 10 ֆրանք գումար մը ծախսելուն համար առտնին խնայողութեան գումարէն: Միւս բախտաւորը, Մէսէն, 32 տարեկան է եւ ամուրի, եւ դերասանութեան հետեւող մ'եղած է: Շատ երջանիկ է 500,000 ֆրանք շահերու բախտաւորութենէն, անոր համար մանաւանդ որ պիտի կրնայ օգնել իր երեք եղբայրներուն եւ երկու քոյրերուն, որոնց երեսը բնաւ խնդացած չէ իրենց ամբողջ կեանքին մէջ:



Ք Ն Ա Շ Ր Ջ Ի Կ Ը

(Somnambule)

Մեր օրերուն, ամուսնութեան աշխարհը նշանածութեան կարճ այլ անուշ թեռնիօքը այնքան համարձակ եւ սանձարձակ հանգամանք մը առած է որ, օրուան երիտասարդները իրենց նշանածութեան մէջ կը վայելեն այն բոլոր բարեմասնութիւնները զորս Ս. Պսակէն վերջ կարելի չէ երեւակայել եւ ձեռք ձգել:

Նշանած երիտասարդը այսօր, իր անբողմէն եւ կեսրոջմէն կը վայելէ այն յարգանքը, զոր ամուսնութենէն վերջ կարելի չէ տեսնել:

Նշանած երիտասարդը իր ստէպ այցելութիւններու միջոցին, պատեհութիւնը կ'ուսնենայ տեսակցիլ օրիորդին հետ այն անուշ քօմրիմաներով, որուն քառորդը չի մնար Ս. սիմիւնին քակուելէն վերջ:

Նշանած երիտասարդը աղջկան կողմէն եւ պարագաներէն կը շոյուի կը փայփայուի, մինչ հարսնիքէն վերջ ցուրտ վերաբերումը տիրող բնոյթը կ'ըլլայ երկու կողմերուն համար ալ:

Վերջապէս նշանածութեան համար եթէ գարունն է ըսենք անոր յաջորդող ամուսնական սովորած փորիկ կենակցութիւնը սաստկաշունջ ձմեռն է կրնանք ըսել:

Եւ ասիկայ ճշմարիտ դասաւորումն է այլաբանօրէն յիշուած:

X

Ծանօթ քահանայի մը վարպետ միջնորդութիւնն էր պատճառ, որ միւսիւ Բարսեղ նշանուեցաւ Օր. Մառի Նստուկեանի հետ:

Ինչպէս բոլոր նշանուելու միտք ունեցող տղու համար կ'ըսուի, միւսիւ Բարսեղի համար ալ կարգ մը ճարտարներ իրենց յատուկ թունալից լեզուաւ եկան համոզել թէ, տղան ջղային է, փախուկ է, սա է, նա է, ու այս բոլորին հանգէպ Տիկին Նստուկեան կ'արձանանար, կարեւորութիւն չէր ի տար, եւ ըսուածները նախանձի կը վերագրեր:

— Մեղայ, կիւրիւ պէս տէրիխանը է.

պատուած չունի քակուած չունի, երկու աշունին քէօնայ ... չեն քաշեր կոր ան է...

Այս եւ ասոր նման մխիթարական խօսքերով առ ոչինչ կը գրեր եղած չարակամ բացատրութիւնները:

Վեց ամիս անցած էր այն օրէն երբ օրուան թերթ մը իր սիւնակներուն մէջ շեղագիր հրատարակած էր՝

Բարսեղ Պստուկեան

եւ

Մառի Նստուկեան

նստեցեալ

Ու հիմա նշանած միւսիւն իր նշանածութեան մեղրը կը քաշեր Նստուկեանց փեթակին մէջ ամէն կիրակի, երբեմն շարժուած մէջ ալ:

Կիրակի մը մինչեւ երեկոյին ժամը տասըն եւ մէկը միւսիւ Բարսեղ չերեւաց: Օր. Մառի հագուած չքուած ճանճերու պէս պատուհանին ետին փակած խոնաւ աչքերով փողոցն ի վար կը նայէր, բայց ի զուր: Տիկին զփռանջին սիրտհատնումը, եւ օրիորդին յուսահատութիւնը երթալով կ'աւելնար, մինչ Սինեքէրիմ աղա, օրիորդին հայրը, անտարբեր կը դիտէր իրեններուն հոգեկան անտանելի վիճակը:

— Չօգ չէ՛յ ... հիշ ասանկ բան ըրած չունէր, ժամին ելլալուն սօլուխը հոս կառնէր տղան ... կըսէ մայրը յոնքերը երկինք բարձրացնելով ...:

— Վտանգ մը եկած է գլխուն ... ինծի խօսք տուաւ անցեալ գիշեր կը պատասխանէ օրիորդը, աչքերուն մէջ սրտադողէն արիւն քալած ...

— Չեկաւ նէ չեկաւ, օրը իրիկուն եղաւ զաթը, ասոր աստեղը օթէլ չէ՞ ես ... չօգ չէ՛յ, հէլգէթ տղան սայլըրը է եղեր, գործով ուշ մնա՛յ նէ ... վաղը առտու պիտի գայ զահէր ... կ'ըսէ Սինեքէրիմ աղա վճռական շեշտով մը:

Ու նոյն պահուն դրան զանգակը կը

զարնուի ճիշդ ժամացոյցին հետ, որ իրիկ-
ուան տաս երկուքը կը զարնէր:

Դուրսը տեղատարաւ անձրեւ մը ապա-
կիններուն կսպառնար, սաստիկ հով մը, եւ
անտանելի ցուրտ մը կը տիրէր: Փողոցները
տակաւ ամայացած էին եւ կատարեալ դի-
շերը սկսած էր, քիչ մը ժամանակէն առաջ:

Ելեքտրական թել մը այսքան կրնար ցըն-
ցել ջիղերը մօրը եւ աղջկան, որոնք խենդի
մը պէս ցատկեցին եւ սանդուխներէն վար
վազելով դաւալգլոր, դէմ առ դէմ եկան
նշանած միւսիւին հետ, որ անձրեւէն մուկ
կտրած շտապաւ կալոյնները կը հանէր:

— Էյ խաչոր մեռայ մեռայ տիրիւմիշ
եղայ եսվրում... ո՛ւր մնացիր ...

— Այո՛, տիկին, ներողութիւն... Ը՛...
քիչ մը անձնական գրադումներս, քիչ մ'ալ
անտանելի օդը պատճառ եղան ... Ը՛ ...
ներեցէ՛ք ...

— Սա բալթօդ հանէ տէ չորնայ ...
վերի օտան տաք է ...

Օր. Մարի ուրախութենէն թեթեւ շար-
ժուձեւերով թէեւ առջի բերան կանացի
նազեր մը ընել կ'ուզէ, սակայն միւսիւ Բար-
սեղին մէկ անուշ ակնարկը շուտ կը հան-
դարտեցնէ անոր ջիղերը, եւ երեքը մէկ
վեր կ'ելլան Սէնէքերիմ աղայի սենեակը:

— Բարի իրինկուն հայր ... կը ներէք
անշուշտ այս ատեն այցելելուս ...

— Բան մը չէ ամա օղում, հիմա լուս
աչքով եկա՛ր... կէս սահաթէն մութը պի-
տի կոխէ ... հավան ալ կաւրուի կոր ...
Փարագա առտուն գայիր նէ ալ կ'ըլլար ...

— Ի՞նչ կըսես ճանրմ դուն ա՛լ ... զա-
հէր ֆէսֆէսէս մեռնէ՛յի ...

— Էյ աղեկ ես հիմա նասը՛լ պիտի եր-
թայ ...

— Ներեցէք հայր, արդէն տունը ըսած
եմ որ եթէ ուշանալու ըլլամ, հոգ մի ընէք,
կարելի է հոն կը կենամ ...

—
Սէնէքերիմ աղա շանթահարուածի պէս
սկսաւ պիշ պիշ կնոջը աչքին մէջ նայել, որ
նոյն ատեն շրթունքները կը խածնէր, մինչ
Օր. Մարի ուրախութենէն մէկ ցատկուտելը
պակաս էր ...

— Աղեկ եա՛ օղում, տունէն ֆէսֆէսէս
չե՞ն ըներ հոս կենալու ըլլաս նէ ...

— Բնա՛ւ ... որովհետեւ ըսած եմ թէ
կարելի է կը կենամ ...

— Սանքի տուններնիդ ալ բէք հեռու
չէ՞ր ամա՛ ...

— Ի՞նչ կըլլայ ճանրմ, փեսայ ըսածդ
զաւակ ըսել է, մէկ աս գիշեր մեզի թող
կենայ ... եապանճի չէ՞ եա ... կ'ըսէ տի-
կինը աչքերը խոշոր խոշոր բացած ...

— Սանքի հավան ալ կը բացուէր կոր...
արգելը կտրեցաւ գիտնալս ...

— Հավան բացուելիք չունի, ես աս վա-
խիթ մարդ դուրս չեմ ձգէր ... վերի սա-
լօնը աղուոր եաթախ մը կը ձգեմ, թող ը-
ռահաթ ընէ ...

— Հա ամա, գիտնալս սալօնը կը վազէ
կո՛ր տէ ...

— Տակը լէհէն կը դնեմ, տղաս եապան-
ճի չէ ...

— Անցած օր մուկ կ'ելլայ կոր ատ օտան
կ'ըսէիք կոր ...

— Կատուն ներսը կը ձգեմ ճուտտը չի
ձգեր ... տահա՞ ...

— Չէ սանքի, միւսին կենալը բան մը
չէ, պէլքի մեր եաթախներէն կը կանի տէյի
է ըսելս ...

— Օ՛ ... խնդրեմ հայրիկ ... ատ գա-
ղափարը մի տածէք ...

— Իշտէ կը մտածեմ կո՛ր, տէ անոր հա-
մար կըսեմ կոր ...

— Բնաւ կարեւորութիւն չունի, արդէն
գիշերները բաւական կը նստուի կոր ...

— Կազն ալ կէնէ վրայ է դրեր ...

— Տաք սենեկը շատ աղուոր ժամանց
մը կունենանք ... աւելի ախորժելի կըլլայ
գիշերուան ընտանեկան խօսակցութիւնը ...

— Ինձի կուգայ քի, փայտն ալ ծան է
տուեր, հէ՛ Ուստիկ ...

— Ապուխ սապուխլանմիշ կըլլաս կոր ալ-
թըխ Սէնէքերիմ աղա ... պէրիքեաթ վէր-
սին տղաս եապանճի չէ, հայտեցէք սուֆ-
ռան իշնանք տէ մէկ երկու հատ ճիկենք,
մինչեւ որ կերակուրը լեցունեմ բերեմ ...
ըսելով ոտքի կեցայ, մինչ Սէնէքերիմ աղա
իրեն կը հետեւի, ու երբ երկու խօսեցեալ-
ները մինակ կը մնան պահիկ մը,

— Ա՛խ ... հէլէ չի գայի՞ր ...

— Կարելի՞ րան է հոգիս... քեզի խօսք-
չի տուի՞ ...

— Այո՛, բայց ...

— Հայրիկը քիչ մը սրտնեղութիւններ յայտնեց, բայց հոգ չէ, հէրիք է որ մայրիկը համամիտ է ...

— Ա՛ ... ան ո՞վ կը սեպէ, նայէ մայրիկս բան մը ըսա՞ւ ...

— Շատ լաւ, ինչպէս պիտի տեսնուի՞նք...

— Դուն կէս գիշերին, կելլաս դուրսի սուֆան, ես ալ հոն կուգամ, կը նստինք կը տեսնուինք, որովհետեւ գիտե՛ս ես՝ ... Հայրիկը մեզ մինակ ձգել չուզեր ...

— Շատ լաւ, ճիշդ կէս գիշերին ...

— Այո՛, այո՛, կէս գիշերին ...

Ու վարէն եղած ազդարարութեան մը վրայ, երկուքն ալ վար կ'իջնան սեղանատուն ու զուարթ ճաշ մը կսկսին ընել:

×

Հոս չպիտի պատմենք ճաշէն վերջ անցած խօսակցութիւնը, այլ միմիայն պիտի գոհանանք շարունակել մեր պատմութիւնը, այն կէտէն՝ երբ Սէնէքերիմ աղա ժամացոյցը նայելով պառկելու ատենը եկած ըլլալը կ'իմացնէ իրեններուն, եւ մեկնելու կը պատրաստուի,

— Ինծի նայէ Ուստիկ, աչքդ բաց, Մարիին դուռը աղեկ կղպէ ...

— Պօշ լախըռտըներ մըներ կէնէ... հայտէ կընայ պառկէ ...

— Մինակ մի ձգեր ճահիլները ... նայէ ի՛նչ կըսեմ կոր նէ ականջ դիր ...

— Դուն ինծի ո՞վ գիտցար ...

— Ձիտեմ ալթըթ, ես ըսե՞մ տէ ետքէն բանայիր չելլայ ...

— Մըրսի վրա՞դ ... կէօյամ քի խելացի ես հա՞ ... հայտէ թառօջըդ կլոխդ անցուր տէ պառկէ, չելլաս նէ վագիլ ըլլաս...

— Իշտէ ես կ'երթամ կոր, նայիմ քի թառօջ մըն ալ քու կլոխդ չանցունեն, զէրէ հիմաճուկուան զանցային, ասանկ նշանածները տիխաթ ընելու է, առաջ ցերեկ կուգային կերթային, հիմա կէճէ խուչի եղան, սալթ տա պօշ տէյիլ, պունասա պիր իշ վար ... կիտես ա աս շարխին, ետկը ծառքդ չէնէյիդ կը դնես տէ աման աման տէյի մանի կը կարգես ...

— Ձաթը մենքալ պառկելու կելլանք,

կոր իշտէ, ըսելով քիչ վերջը բոլորը մէկ իրենց սենեակը կը քաշուին, ու տունը ամբողջ խոր քնոյ մէջ կը թաղուի:

×

Կէս գիշերին, գերեզմանատունէն փախած խոռքախի պէս ստուեր մը սենեակէն ելլալով լուռ անձայն կուգայ բազմոցին վրայ կը նստի: Սենեկին խոր լուսութիւնը խանգարողը միմիայն բիսիկը կըլլայ, որ մութին մէջ աչքերը փայլատակելով կըսկսի մոմալ:

Միւսիւ Բարսեղ, իբրեւ ճշդապահ, գիշերապահին ճովանին հարուածները համբերով դուրս ելած էր, ըստ խոստման, եւ կ'սպասէր օրիորդին, որպէս զի ան ալ իր կարգին յարգելով իր խոստումը ներկայանար իրեն, եւ երկուքն ալ նստէին իրենց նշանածի խօսուրուտութիւն:

Սէնէքերիմ աղա, որ սովորութիւն ունէր կէս գիշերին անգամ մը սենեկէն դուրս ելլալու, այս անգամ առանց մոմի ելլալը անբաղդ երիտասարդին խաղ մը եղաւ փառաւորապէս:

Միւսիւ Բարսեղ, նշանածը, երբ ճերմակ գիշերնոցի մը ստուերը նմարեց սանդաղաւտական խոր մթութեան մէջ, ձայնեց,

— Մարի՛ ... հոգի՛ս ... նա՛ ... հո՛ս եմ ... այս կողմը եկո՛ւր ... հոգիս ...

— ... կամաց կոխէ, որպէս զի ոտքի ձայն չելլայ խուչս, այս կողմը եկուր ...

Այս անակնկալ հրաւերէն յապուշ կըրթուած Սէնէքերիմ աղա, պահ մը կենալով կուգէ իր աղջկան տեղը բռնել, եւ ձայնը բարակ եւ անհասկնալի թօնով մը կը պատասխանէ ...

— Ձըլլա՛ր ... հիմա հայրիկս դուրս կելլա՛յ ...

— Կաղաչեմ Մարի՛ ... տնեցիք բոլորն ալ կը քնանան կոր ... եկո՛ւր ... ճիշդ ատենն է առիթէն օգտուելու, եկո՛ւր քիչ մը խօսակցինք ...

— Ձըլլա՛ր ... չեմ ի գար ... ես պառկել կ'երթամ կոր ...

Վերջապէս այլայլմէ ելած միւսիւ Բարս

սեղ, երբ մէկ ոստումով Մարին բռնելու համար տեղէն շարժում մը կ'ընէ, Սէնէ-քերիմ աղա վարպետ ճարպիկութեամբ մը իր սենեկը կը քաշուի, մինակը ձգելով տը-ղան իր անակնկալովը:

— Ուստի՛կ . . . Ուստի՛կ . . .

— Է՛յ . . . ի՞նչ է կէնէ . . .

— Ելի՛ր, գող կայ գող . . .

— Վո՛ւյ մըսեր, ըսելով տեղէն կը ցատկէ եւ խփոյն աշտանակին լուցիկ մը վառելով, ո՛ւր է, ո՛ւր տեսար . . .

— Հիմա դուրս ելայ, ճերմակներ հա-գած մէկը կը պտըտկեր կոր սուֆան . . .

— Քա վո՛ւյ . . . բէրի է անանկ է նէ . . .

— Ես ալ անանկ գիտցա՞յ ամա, ըռա-բութալը լախըռտը կ'ընէ կոր . . . աղջկանս անունը տուաւ, ֆիլան . . .

— Խե՛նդ ես, Սէնէքերիմ աղա՛ . . . երա՞զ կը տեսնաս կոր . . .

— Ինծի նայէ՛, տա մոմը առ տէ մէկ-տեղ դուրս ելանք, աչքովդ տեսիր, պաղի բերի կայ քի կընիկ տեսնայ նէ կը փախչի կ'ըսեն . . .

— Էյ հայտէ նայինք, աստեղը բան մը կայ ամա չեմ հասկնար կոր . . .

Ու երկուքը մէկ աշտանակը ձեռքերնին սենեակէն դուրս կ'ելան, երբ միւսիւ նշա նածը իր ճերմակ գիշերնոցով կը սքտըկար սուֆային մէջ . . .

— Քա միւսիւ Բարսեղն է եղեր . . . սիւրբիօնէ՛կ կար . . . աճապ . . .

Միւսիւ Բարսեղ աչքերը կէս մը գոց, ձեռքերը խարխափելով կը պտըտի . . .

— Հասկցայ, առջի իրիկուրնէ ալ մոռ-ցանք տեղը ցուցնելու . . .

Միւսիւ Բարսեղ պտոյտը կը շարունա-կէ . . .

— Չօդ չէ՛յ, ես ալ պիրտէն պիրէ դող ելայ . . . դուն ալ թօհաֆ ես Սէնէքերիմ աղա . . . չի ճանչցա՞ր փեսացուդ . . .

— Կընիկ գիտե՞ս եա, իմ աչքերս կա-տուի ճընս են, ճանչցայ ամա, գործիս ա-սանկ եկաւ քի դուն ալ աչքովդ տեսնաս տէյի . . .

— Քա ամա տղան պիչիմ մը կը պտըտի կոր . . .

— Խափանը ինկաւ տէ ան է, սէրսէմ-լէնմիշ եղաւ . . .

— Քա՛ . . . չօրնամ . . . կէճէ կէզէն կ'ըսե՞ն նէ ան է, վա՛խ եավրում, սո՛ւա . . . մի խօսիր, կէշ է կ'ըսեն . . .

— Ես ալ անանկ սանմիշ պիտի ընէի-ամա, խօրաթա՞ն ուր դնենք . . .

— Ուր է ճուղապ չի տար կոր նէ . . .

Այս միջոցին միւսիւ Բարսեղ իր խաղը յաջողած ըլլալուն գուհունակ, սենեակը կը քաշուի ու դուռը կը գոցէ . . .

— Տեսա՞ր, ներս գնաց, կէճէ կէզէն կը-սեն, իշտէ հիւանդութիւն մըն է քի ասանկ գիշերները կ'ելլայ կը պտըտի, էօհէօ մը ը-նես նէ էօտը բաթլամիշ կ'ըլլայ, կը մեռնի կ'ըսեն . . .

— Ինծի նայէ, աս հէրիֆը վաղն առ-տու կանուխ դուրս պիտի նետեմ . . .

— Խեթի՞դ եկաւ զահէր . . . ամէն մարդ-ավուճներով ոսկի կուտայ կոր քի, աղջիկը ծառքէ հանէ տէյի ամա չի կրնար կոր, խապա՞ր ես . . .

— Աղջիկը ծառքէ հանէ ամա՞, մարդու տայ տէյի ճահթ կընեն կոր, ասանկ կէճէ պայխուշներու համար չէ . . . : Մտիկ ըրէ քի ըսեմ: Ես դուրս կ'ելլայի կոր, նայիս քի ճերմակներ հագած մէկը քէօչէն նստած էր, առջի պերան վախցայ մութ տեղը, նա-յիս քի, աս նազէնիմ բէրին, Մառիս . . . խուշիկըս . . . նա՛, հոս եմ . . . աս թա-ռաֆ եկուր հագիս, ճիշերիս քէօչէն, սիր-աիս պուճախը, հոգիս օճախը, ըսելով սուլանմիշ ըլլալ պաշլայեց, հիշ ծան չի հա-նեցի, չիւնքիւ հասկցայ միտքը, անիկայ գիտցաւ քի Մառին է տէ կը կանչէր կոր քի բիսի քիսի բամպուղի խաղան տէյի, ես ալ օյին ըլլայ տէյի, ծանս բարակցուցի, աղ-ջըկանը ծանին թախլիթ, պաշլայեցի, չըլ-լար, չեմ ի գար, կիմանան տէյի ճուղապ տալ, նայիս քի աս հէրիֆը վրաս գալ պաշ-լայեց նէ դուռը բացի ներս մտայ . . .

— Սուտ ես սուտ, տղան տիւզճէ կէճէ կէզէն է իշտէ . . .

— Չաթը կընիկ չէ՞ք մի, զոքանջները փեսանին կը սիրեն տէյի անցած օր զազէ-թային գրածը բէք ալ թամամ էր . . .

— Եուսուռճախըս տանիս քի տղուն վը-րայ մուր կը քսես կոր . . .

— Քա հէրիֆը տիւզճէ աղջկանս հետ
խօրաթույի տէյի տուգախ խուռմիշ է ըրեր...

— Ողբ՞կ եա ... Մառիս ո՞ւր է ...

— Հա՛ ... անիկայ սէրսէմ է քի դուրս
ելլայ, հէլպէթ օտայէն իմացաւ տէ նորէն
եաթախը մտաւ ... ան մօրը զաւակը չէ՞
մի՛ ...

— Քա ամա տղան հիշ ան թառափները
չէր, հի՛չ տասնկ բան ըրած չունէր ...

— Գիշեր կեցած չունե՞ր քի ... կենա-
լուն պէս ըռէնկը դուրս տուաւ, հիւանդու-
թիւնը օտթան ելաւ ...

— Հիւանդութիւն է ամա, կարգուի նէ
կասնի ... էյ ճըգէ քի չեմ ամօթեր, զա-
հէր աղջիկս անտար կը սիրէ կո՞ր քի, գի-
շերը անոր ուղուռին անդաստան կը պտըտի
կոր ... տուվա ըրէ քի պսակէն ետքն ալ
ասանկ սիրով ըլլան ...

— Անիկայ Աստուած գիտէ, ես պսակէն
տուաջ աչքս չորս պանա՞մ աէ ետքէն ալ ա-
զեկ ելլա՞ն նէ բախտըմա ... ինծի մնայ նէ
ես աղջիկս, սէրչէ խուշիին կուտամ, կէճէ
խուշիին չեմ ի տար ... մօթուան ցուցուց
չիւնքիւ ...

— Հայտէ՛ հայտէ՛, վայ պերանդդ մի
պանար տէ ներս քալէ ... ըսելով այր եւ
կին իրենց սենեակը կը քաշուին:

X

Առաւօտուն, դեռ հաւը չի խօսած, փո-
ղոցին դուռը մեղմիկ մը կը գոցուի, ու այս
ձայնը ոչ ոք կ'առնէ:

Միւսիւ քնաչղիկը՝ մէկ կողմանէ Օր.
Մառիին չերեւալէն, միւս կողմէ գծած յա-
տակագիծին խայտառակաբար չի յաջողելէն
սրտնեղած, կծիկը կը դնէ կանուխ, ալ չի
վերադառնալու պայմանաւ:

Անարժանաբար կը խրատեմ գՁեզ, Ազ-
նիւ ընթերցողք, ձեր աղջիկներուն պսակը
որչափ կարելի է շուտ հասցուցէք նշանտու-
քէն վերջ, որպէս զի կէս գիշերուն քնաչը-
րիկներ չի պտըտին իրենց ձերմակ գիշեր-
նոցներով:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ



ՅԱՅՏԵՆՈՒԹԻՒՆ

Դեռ համբոյր մը չ'առի ֆենե ո՛հ աղուն՛ր,
Համբոյր մ'սիրոյ, սիրովանֆի, գորովի.
Կուրծիդ հրախառ չի սեղմեցի սրժիս՝ որ
Զգայի յոյզն, բոցավառումն սիրոյի:

Լոկ պաշտում մը, հաւասք մը սուրբ ունիւմ ես,
Կռապաշտներն ինչպէս որ կուտֆն կը պաշտեն,
Աննիւթական սիրահար մը աղեկեզ՝
Որ կը հաշի ֆեզ վայելու մարմաքեն:

Բայց այդ վայելքն դե՛ռ կ'ուշանայ մօտեղու,
Վախն ալ ունիւմ քե չի հասնիւմ պիտի հո՛ն,
Ծայրն այդ համբուն, նուիրական վայրին, ու
Պիտի հասնիւմ անմխիթար, անեքուն:

Զի դո՛ւն Կրանիք սիրս մը ունիս, ապառա՛ծ՝
Որ ծովուն սուր աշիֆները չ'են փշրեր,
Գուր չ'ունիս դու, որքան ըլլաւ հաշումաշ
Պիտի չ'զգաս, պիտի չ'ըսես «մի՛ սիրեք»:

ՍՏԵՓԱՆ ԽԱՉՈՒՆԻ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1803

Կ. Պոլիս, Մեհման փողոց, քիւ 57

Օսմանեան Պատմութիւն մինչեւ մեր օ-
րերը Մ. Աշէեան Ղրշ. 4Գոհարմասեանի, Երկսեռ վարժարան-
ներու ուսանողներու ընթերցման արժանի
լաւագոյն դասագիրքը Ղրշ. 5Զրուցատրական Ընթերցարան. տարրա-
կան կարգերու. իր տեսակին մէջ բոլորովին
նոր Ղրշ. 3Մանկավարժական Քերականութիւն. Գ.
մաս. պատկերներու վրայ իր աննման ոճովը
կը սորվեցնէ Հայերէն Քերականութիւնը
Ղրշ. 4Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրա-
բարի, կ'ուսուցանէ գրաբարը հասկնալ ու
թարգմանել, առանց հոլովները ու բայերը
ի բերան սովորեցնելու: Ղրշ. 4ԿԱՐՃ միջոցի մէջ Անգլիերէն կամ Ֆր-
րանսերէն սովորի փափաքողներու միակ
գիրքը ՄԱՅՍԹԵՐՍՇԱՖԹ ՍԻՍԹԵՄ. 15
տետրերու գինը Ղրշ. 30Առողջաբանական Մարմնամարզութիւն.
54 պատկերով, առանց գործիքի. ամէն
տուն պէտք է ունենայ այս գիրքէն Ղրշ. 5:

ԻՄ ՓԱՓԱՔԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

- Կը փափաքիմ որ ես ըլլամ շատ հարուստ
Բայց ոսկին զիս կը բարեւէ 'ի հեռուստ:
- Շատ կը ցանկամ որ ունենամ նըշանած
Բայց ինչ օգուտ որ ուտելու չունիմ հաց:
- Շատ անգամ ալ ամուսնանալ կ'երազեմ
Չեմ յիշեր թէ գիշերըն հաց կերած եմ:
- Կուզեմ առնել աղջիկ մը որ եմ սիրած
Բայց օրն ի բուն կերածըս է պանիր հաց:
- Կ'ուզեմ հագնիլ նոր լաթեր, տալ թուակթ,
Բայց Խօրոզուն կուզէ կոր լաւ քէֆալ թ:
- Կ'ուզեմ որ ինձ ամէնքն ըսեն մենք աղա
Բայց այն ատեն մեր ջաղացքըն ո՞վ աղա:
- Կ'ուզեմ որ միշտ ամեն մարդիկ զիս գովեն
Բայց եւ այնպէս խոյս տան ամէնքն իմ քովէն:
- Կ'ուզեմ առնել ժամուն համար մի խըլիւր
Բայց կուտ չունիմ կոշիկս ընել մի սկսիր
(որ թարգմանի պաշլամա):
- Կ'ուզեմ ըլլալ մերին ժամուն Չօրպաճի
Որ տեսնեն թէ դրամն ինչպէս հոն կ'աճի:
- Կ'ուզեմ ըլլալ հոգաբարձու դըպրոցին
Բայց ինձ կըսեն պէ մարդ չե՞րթաս քու գործին:
- Կուզեմ որ միշտ ձիով կառքով ես գամ ժուռ
Տապանակով ալ ոտքերուս իջաւ ջուր:
- Չեմ ուզեր որ կիներն ընեն ինձի նազ,
Թէ ոչ փետտեմ երբ գըլուխըս գտնեմ մազ:
- Կ'ուզեմ ըլլալ ամէն մարդու ես ծանօթ
Սակայն երբէք որպէս անարգ մի անօթ:
- Կ'ուզեմ ընել գորգի վըրայ ես մեծ գործ
Բայց եւ այնպէս ոչ կուտ ունիմ ոչալ փորձ:
- Կ'ուզեմ երթալ պարահանդէս ու թատրոն
Երբ ունենամ հարուստ ճէօմէրտ մի բաթրոն:

— Կ'ուզեմ յայտնել սէրըս անկեղծ սուրբ ու
տաք
Բայց վախեամ թէ վերջը կ'ուտեմ մի ապտակ:

— Կ'ուզեմ առնել խընձոր այտէն համրոյր մը
Բայց միշտ քիթիս լաւ տըփոցի գայ բոյր մը:


— Է՛հ ուրեմն պէտք չէ ընել չոր փափաք
Ու այս կերպով կեանք մ'անցընել թոյլ
տափակ:

— Փափաքները կիրագործէ դըրամը,
Երբոր շահիս այն ատեն տես դու համը:

— Բարոյական այս խօսքերըս ցիր ու ցան
Գիտցած ըլլաք շատ չէք գըտներ բիացան:

Տաղանդս(*) անփիճելի
Սկիւտար Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

(*) Կը խընդրուի անուշադրութեամբ
կաղամբ չի կարգալ:




ՊԵՐՎԵՐԶԱՐ

Ծանօթ երաժշտագէտ Գրիգոր Էֆ. Չուհանեան՝ որ ասկէ առաջ Պետկիւզարում անունով արեւելեան եղանակներու ձայնագրեալ տետրակ մը հրատարակած էր, այս անգամ հրապարակ հանեց նոյն գործին Բ. տետրը եւս՝ ճոխ և մաքուր տպագրութեամբ:

Հեղինակին այս գործը կը յանձնարարենք ամէն երաժշտասէրներու և մասնաւորապէս ամէն անոնց՝ որոնք կը փափաքին սորվիլ և վարժուիլ նօթայի և շարգիներու:

Մէն մի պրակի գինն է 3 դրշ. կը գտնուի Պապը-Ալի ճատտէսի Ասըր գրատունը՝ ինչպէս նաեւ բոլոր գրավաճառներու քով:



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲերԱնն մեզ կը տեղեկացնեն թէ՛ դրամ շահելէն աւելի մօտայի սիրահար չիք միւսիւ մը յետին (?) նորաձեւութեան համապատասխան նեղ կոշիկներ հագնելուն հետեւանօք, զոյգ տոտիկները մինչեւ վիրաբոյժներու ձեռքը հասէր է։

ԳԱՏԸ-ԳԻԻՂԻ նաւամատոյցին կից սրճարանի տէմիրպաշ յաճախորդներէն կը խնդրուի, որպէս զի ժամը երեկոյեան իննէն վերջ հոն տեղի անցուդարձը դիտելու համար թապլօներ չի ձեւանան։

ՆՈՅՆ գիւղէն մեզ կը գրեն թէ՛ մէկ քանի օրիորդներ տեսնալով որ քօռքուգալը օր օրի սքօռքաները կերելի, իրենց ձեռքի միմօտիս մանօտիկները ըռաֆը գրեր են։ (Իրա՛ւ . . . ո՛ր երկի՛ւք, ո՛ր լուսի՛ւն . . . եւլն. Ծ. Խ.)։

ՍԿԻԻՏԱՐԷՆ մեզ լուր կուտան թէ՛ միացեալ թաղերու ուսուցիչները մտադիր են մէկ մէկ պիսիֆիք գործածել, ի դիւրութիւն իրենց անմիջական երթեւեկութեան։ (Կ'ընդունինք և կը վաւերացնենք. Ծ. Խ.)։

ՆՈՅՆ գիւղէն դարձեալ կը գրեն թէ՛ ստաթիսթիքի մը նայելով վերջին շոգենաւէն ելլող եւ մինչեւ Պաղլար պաշի տապանակ ուխտի հասնող մէկու մը վրան մաքրուելով չորս քիւֆէ մօտ գոյացեր է։ (Մնչուչտ փրան հաշիւին մէջը չէ. Ծ. Խ.)։

ՍԱՄԼԱԹՕՄԻՈՒԻԷՆ կը խնդրեն մե՜նէ հարց ընել կենցաղագիտութիւն աւանդող ուհիին թէ՛ բոսաւ սօրմաւի ուտելէ վերջ պատշաճ է ցը ցը ցը ը՜նելով աւանները մաքրել այլոց դէմ։ (Պատասխանը յաջօրդ շաբթու կընդունիք ծաղիկէ կողովով. Ծ. Խ.)։

ՕՐԹԱԳԻԻՂԷՆ մեզ լուր կուտան թէ՛ անցեալ գիշեր սկամպիլէն կթուող տիկին մը ութը քաշ կաթ մատակարարած է դրացիներուն։ (Եթէ մկըրտուած չէ կաթը . . . պռալօ, աղնիւ է եղեր. Ծ. Խ.)։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Տնօրէնութիւնը կը խնդրէ Տրապիզոնի իր պատուարժան բաժանորդներէն, որպէս զի հաճին Յարութիւն Տիվանեան անուն անձին մօտ բարեխօսել իր պարտքը վճարելու մասին։ Կը կարծենք թէ վարժապետները ճշգրտապէս կըլլան և բարի օրինակ իրենց կրթութեան յանձնուած պատիկներու մօտ։

ՄԱԲՐԻ-ԳԻԻՂԷՆ մեզ կը գրեն թէ՛ առեւտուրի պատճառաւ վերջին թռէնին մնացողի հովեր առնող ախշաւնի աղաները լաւ կընեն եթէ ճըւթկելիք օղինին տունը՝ իրենց ընտանիքին մօտ խմեն, որպէս զի պատիկներն ալ այս ցուրտին փողոցները չի չափշփեն. «հայրիկին թաթիկը ապիս ընենք» ըսելով։

ՍԿԻԻՏԱՐԷՆ մեզ կը տեղեկացնեն թէ՛ օդերուն ցրտութեան պատճառաւ մէկ քանի խելացի աղաներ, օղիով տաքնալը որոշած են, նկատելով որ անոր մէկ գաւաթը՝ կէս չէքի փայտի դէմ կուգայ։ (Այս հաշուով պատիկներն ալ տաքցնելու համար հօ՛ւ պիտի ընեն. Ծ. Խ.)։

Արտօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեփ, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անդային մասերն եզան մին, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆորներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պախս նոր բերուած այս անդուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և դնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւար թիշխներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառուկիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային ակարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անդուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով:

50—18

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԵՏԱՍՏ ԵՒ ՉՍՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալսարան, Թոփալեան խան


Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանքատուրութեամբ և գիններու անմիջեղի աժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուատներու, կանանց թելոյններու և տղայոց շիք և դիմացկուն ֆաբրիկաներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է: Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—13

ՁՈՒԿԸ ԾՈՎԷՆ ԴՈՒՐՈ

Կազմով վատաւոր, չիդերով տկար Մեծ ու փոքրերուն յաւատ օգտակար. Բուժիչ, կազդուորիչ դեղ մը անուանի եթէ կայ՝ ճրկան գուտ իւղն է անի: Եւ հրաշագործ այդ ճուղն է Մօրիւն իր իւղն ըմպողը կ'ստանայ աւիւն. Կուտայ ախորժակ, ոյժ, քուն, եւ իսկոյն Կարմրին այտեր խնձորի հանգոյն: — Բայց աւա՛ղ որ իւղին այդ Մօրիւն ճրկան Անխարդախը հոս ծախողներ քիչ կան... Հաւագոյն տեսակն անոր, քաղցրահամ, Ծուետի եզրերէն շիտակ, այս անգամ Բերէյ տուած է Հեռոն Կիւմիւշեան, Որ՝ ընթացքին մէջ մօտակայ ճմրան իր դեղարանի յաճախորդք ամեն Ուգածնուն չափ գան, առնեն ու խմեն: Եւ — ինչպէս ամրան հեղձուցիչ տաքուն Միջատասպանով զրտած անուշ քուն, — Ձմրան ցրտաշունչ խիստ օրերուն ալ Կարեման առողջ կենցաղ ունենալ, Եւ միշտ ստիպուին շիտակ դիմելու: Առ. Լ. ԿԻՄԻՆԵԱՆ, ի Ձարջը Գաբու:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօղի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկունք, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ, Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիտիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար:

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել:

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն զժուարհաճ յաճախորդները:

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-9

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են: